ՀԱՅԿԱԿԱՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ
<<ԿԱՄՔ>>
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆ

ՀՀ, 0015, ք. Երևան, Ցախի 19, հեռ. (+374 44) 77-17-79, էլ. փոստ՝ info@kamq.am

<<31>> օգոստոսի 2020թ.

Երևանի քաղաքապետ
Հայկ Մարությանին

ՀՀ Ոստիկանության պետ
Վահե Ղազարյանին

Հայկական Արժեքների Պաշտպանության
<<ԿԱՄՔ>> հասարակական
նախաձեռնության հիմնադիր
Վահագն Չախալյանից
Հեռ: 093 21 74 70
Email: chakhalyanv@gmail.com

1855189

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅՈՒՆ
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՓԱՍԱԹՂԹԱՐԱՆ
No 20/89246 31 08 2020 թ.

31.08.2019թ.

ԴԻՄՈՒՄ

ՀԱՆՐԱՅԻՆ ՇՏԱՊ ՀԱՎԱՔԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԻՐԱՁԵԿՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հարգելի՛ պարոն Մարության

Ղեկավարվելով «Հավաքների ազատության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթներով(Հոդված 27. Ինքնաբուխ և շտապ հավաք անցկացնելու կարգը)՝ իրազեկում ենք լիազոր մարմնին և ՀՀ ոստիկանությանը, որ

2020 թվականի սեպտեմբերի 7-ին «ԿԱՄՔ» Հասարակական նախաձեռնության հիմնադիր Վահագն Չախալյանի գլխավորությամբ նախատեսվում է իրականացնել խաղաղ երթ, ապա շտապ հավաք, խաղաղ բողոքի ակցիա՝ պահանջելու «ՀՀ ԿԳՄՍ նախարար Արայիկ Հարությունյանի հրաժարականը»:

Երթը մեկնարկելու ժամը 16:00-ին՝ Աթենքի փողոց - Մաշտոցի պողոտա – Ամիրյան փողոց – Հանրապետության Հրապարակ (Կառավարության շենք) – Վազգեն Սարգսյան փողոց – Վազգեն Սարգսյան 3 (ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության շենք, հասցե՝ Երևան, 0010, Կառավարական տուն N3) երթուղով: Այնուհետև ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության շենքի դիմաց ժամը 17:00-ից սկսվելու է հավաքը և ավարտվելու է ժամը 21:00-ին:

Կարգադրիչների մոտավոր թիվը 15-ն է, իսկ հավաքի մասնակիցների թիվը՝ 3000 - 5000:

Հավաքի անցկացման ժամանակ օգտագործվելիք առարկաները կամ տեխնիկական միջոցներն են՝ բարձրախոսեր, դինամիկներ, ռուպորներ, դրոշներ, նկարներ, պլակատներ, թմբուկներ, շեփորներ:

Ղեկավարվելով «Հավաքների ազատության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթներով՝ խնդրում եմ պետության կողմից ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ երթի և հավաքի բնականոն ու խաղաղ ընթացքն ապահովելու նպատակով:

Խնդրում եմ ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության շենքի դիմաց (հասցե՝ Երևան, 0010, Կառավարական տուն N3) հավաքի անցկացման նպատակով և ՀՀ-ում նոր Կորոնավիրուսային վարակով պայմանավորված կառանտինի պատճառով պարետի որոշմամբ հավաքի մասնակիցների միջև սոցիալական հեռավորություն ապահովելու նպատակով, հավաքի վայրում ապահովել՝ էլեկտրական հոսանքի աղբյուր, Շտապբուժօգնության մեքենայի առկայություն և ԿԳՄՍ շենքի առջևի տարածքում շուրջ 30 մետր երկարությամբ կայանատեղերի՝ մեքենաներից (այդ թվում նաև ծառայողական և ոստիկանական) ազատ տարածք: Խնդրում եմ նաև թույլատրել մայթին հավաքի ընթացքում տեղադրել ձայնային դինամիկներ:

Հարգանքով՝

Վահագն Չախալյան
Հայկական Արժեքների Պաշտպանության
<<ԿԱՄՔ>> հասարակական
նախաձեռնության հիմնադիր